

Հայ գրականության մարզային փուլ - 2022 թ.

Հարցաշարերի պատասխանները - 11-րդ դասարան

1. Ասույթի հեղինակը Վարպետն է՝ Ավետիք Իսահակյանը, ով անվերապահորեն ընդունել է Նար-Դոսի «Մեր գրականության հարատև փառքերից մեկը» լինելու փաստը: Նար-Դոսը Միքայել Տեր-Հովհաննիսյանը, իր գրական կեղծանվան մասին հայտնում է, որ «Նոր-Դարի» քարտուղար Մելքոն Դանագյոզյանը, «Նունե» վեպը տպելուց հետո, առաջարկում է գրական կեղծանուն ընտրել և կանգ է առնում նարդոս ծաղկի վրա: «Մեջտեղն էլ գծիկով կբաժանենք ու շատ բարեհնչյուն մի անուն դուրս կգա»: Այդպես է ծնվել «մեր գրականության հարատև փառքերից» մեկի գրական կեղծանունը: Ինչպես բոլոր սկսնակ ստեղծագործողները, Նար-Դոսն էլ սկսում է բանաստեղծությամբ՝ Պեշիկշաշյանի «Գարուն» բանաստեղծությունը դառնում է ներշնչանքի աղբյուր և անգամ վերնագիրն է պահպանում: Հետո գրական բախտը փորձում է դրամայի ժանրում՝ գրելով «Մեղր և ճանճեր» և «Եղբայր» պիեսները: Բայց շատ արագ հասկանում է իր գրական առաքելությունը և մեկընդմիջտ որդեգրում արձակի ժանրը: Նրա «Մեր թաղը» պատմվածաշարը դառնում է ընթերցողի սեղանի գիրքը: Այնուհետև գրում է վիպակներ ու վեպեր, ավանդություններ, հեքիաթներ, հոդվածներ: Նրա համար անառարկելի հեղինակություններ էին Չեխովն ու Մոպսսանը: Նար-Դոսի «Թե ինչ եղավ հետո, երբ շաքարամանից երկու կտոր շաքար պակասեց», «Հոգուն վրա հասավ», «Սպանված աղավնին», «Պայքար», «Մահը» գործերը այսօր էլ կարդացվում են մեծ հետաքրքրությամբ, քանի որ Նար-Դոսին մշտապես զբաղեցրել են հասարակության մեջ տիրող մարդկային փոխհարաբերությունները, հոգեբանությունը, բարոյական ու սոցիալական խնդիրները: «Իմ գրվածքներում ես ուզեցել եմ պատկերել մեծ քաղաքի խուլ թաղերում իրենց ողորմելի կյանքը քարշ տվող խեղճ, աղքատ դասակարգի չարքաշ կյանքը, այդ դասակարգի մեջ տիրող մտավոր թանձր խավարը, կնոջ սոսկալի վիճակը տղամարդու ձեռքին»: Նյութականի վրա հիմնված բուրժուական ընտանիքի կործանումը և կյանքի համար պայքարելու կամքի բացակայությունը («Աննա Մարոյան»), պայքարելու, հաղթելու անկարողությունը և կյանքին համարձակորեն ձեռնոց նետելու ու հաղթելու կամքը («Ես և նա»), դառնություններին ու վշտերին դիմակայելու փոխարեն, դրանք հարազատների վրա թափելու կատաղությունը («Հոգուն վրա հասավ»), Կյանքի ու մահվան փիլիսոփայությունը, ապրելու իրավունք վաստակելը և վեհ կոչում հետապնդելը («Մահը»), երկու սեռերի միջև գոյություն ունեցող հարատև թնջուկը, խաբված երագների փլուզումը և ցինիզմի ու վայելքի հակադրումը («Սպանված աղավնի») և այլն: Մնացյալը՝ աշակերտը՝ իր ընտրությամբ:

2. XX դարասկիզբը մեր ժողովրդի ամենաողբերգական էջերից է, որ ավելի քան հարյուրամյա հեռվից արնածորում է մեր պատմության քառուղիներում, պահանջում արդար հատուցում մոռված մեկուկես միլիոն կյանքերի, կորուսյալ հայրենիքի, հոշոտված, քարաջարդ արված Չոհրապի, սրախողող Վարուժանի, Միամանթոյի, Մևակի, խելագարված ու անթաղ նահատակ Կոմիտասի համար: Երևի թե ոչ ոք այնքան չէր հավատացել Երիտթուրքերի հեղափոխությանը, որքան հեռատես ու խորագիտակ փաստաբանն ու հրապարակախոսը, ազգային հասարակական գործիչը, մարդկային հոգիների զարմանալի թարգմանը, և ոչ ոք այնքան խորությամբ չէր զգացել իր հավատի ու արժանապատվության գահավիժումը: XX դարասկզբին Չոհրապը արևմտահայ իրականության Հովհաննես Թումանյանն էր մտահոգ ու բզկտված իր ժողովրդին պատուհասած եղասպանությունից, գաղթից, ժանտախտից ու անմարդկային պայմաններից:

Չոհրապը չձեռքազրկվեց ապրիլի 24-ին. նա դրսում էր և անում էր անկարելին՝ փրկելու իր ընկերներին ու իր ժողովրդին: Ծեծում էր դեսպանատների դռները, աշխարհին էր ներկայացնում թուրքերի անբարո, գազանաբարո վարքագիծը: Լինելով թուրքական մեջլիսի մեքուս՝ նա պահանջում էր բացատրություն հայերի տեղահանության ու կոտորածների, աքսորների և ունեզրկման հարցերով: Երբ վերջնականապես համոզվեց թուրքերի՝ հայաջինջ

քաղաքականության ու անօգուտ պայքարի մեջ, արյունոտ Թալեաթի երեսին շարտեց վերոբերյալ խոսքերը: Այդ օրն էլ վերջնականապես արձակեց իր իսկ ճակատագիրը: Այսօր էլ Չոհրապը մեծագույն պահանջատերն է ցեղասպանության ճանաչման ու դատապարտման և այսօր էլ նա «կպահանջե իր այնքան ուշացած հաշիվը որ միայն թուրքից, այլև մեզնից՝ ապրողներից»:
Անդրանիկ Օտուկյանը Չոհրապին այսպես է բնութագրել. «Եզակի էր բացառիկներուն մեջ և եզակի մնաց մինչև վերջ»:

3. Հովհաննես Թումանյանը հայ հանճարի խտացումն ու մարմնացումն է, հայ մարդու ցավերի թարգմանը, նրա երազանքների կրողն ու մարմնավորողը: Իր իմաստուն և խորաթափանց հոգով, իր ազնվական կեցվածքով նա նվաճել է իր «ժողովրդի կենսագիրը» լինելու բացառիկ կոչումը: Մեծ լոռեցին միշտ էլ կանգնած է եղել իր ճողովրդի կողքին, կիսել է նրա դառնություններն ու ուրախությունները, իսկ երբ սպառնացել են նրա գոյությանը, երբ վտանգվել է նրա ապրելու իրավունքը, նա անվարան նետվել է պայքարի մեջ գրիչով ու դրոշմով, իր և իր զավակների կյանքով. նա հայրենիքի գոհասեղանին է դրել իր բոլոր չորս որդիներին՝ ինքն էլ «վառվելով ու հուր դառնալով» իր ողջ կենսագրությամբ ու գործունեությամբ: XX դարակազմի շայաստանի ու հայ ժողովրդի կյանքը վտանգված էր ինչպես երբեք: Ամբողջ Կովկասը, Արևելյան շայաստանը ազգամիջյան կռիվների, ցարական ու տեղական կառավարիչների խարդավանքների կիզակետում էր: Առաջին համաշխարհային պատերազմը բաժանում էր աշխարհի քարտեզը և շայաստանը՝ իր երկու հատվածներով, կանգնած էր ոչնչացման եզրին: Երիտթուրքերը մորթում ու տեղահանում էին հայերին իրենց բնօրրանից. քաղաքակիրթ աշխարհը, բռնված տիրելու ու բաժանելու մոլուցքով, ոչ միայն լռում էր, այլև աջակցում: շայ ժողովրդի նվիրյալ զավակները պայքարում էին գեներով ու գրչով, խոսքով ու անձով: Այդ նվիրյալների կենտրոնաձիգ դեմքերից էր հմուտ, հանճարեղ լոռեցին, ով անմնացորդ նվիրվեց իր ժողովրդի փրկության գործին: 1899-ին հիմնադրված Վերնատունը, որ պետք է ծառայեր գրականությանը, այլևս վերածվել էր ազգափրկիչ կենտրոնի. Թումանյանի տանն էին հավաքվում ու ծրագրում իրենց անելիքը հայ մտավորականներն ու զինվորականները, սովորական մարդիկ: 1907թթ. հայ-թաթարական ընդհարումների ժամանակ Թումանյանին տեսնում ենք սպիտակ դրոշմով Լոռում, Ջավախքում, բոլոր թեժ կետերում, որտեղ հեղվում էր անմեղների արյունը: Նա դառնում է խաղաղության դեսպանը՝ հաշտության ու արթնամտության կոչելով մոլորյալ ազգություններին: Օգտագործելով իր նկատմամբ եղած անկաշառ սերն ու հարգանքը՝ մեծ հայրորդուն հաջողվում է կասեցնել ազգակործան ընդհարումը: Մեղադրվելով հակառուսական գործունեության մեջ՝ Թումանյանը երկու անգամ ձերբակալվում ու բանտարկվում է հանրահայտ Մետեխի բանտում (1908-1909, 1911-1912): Սակայն այդ բանտարկությունները առ ոչինչ էին մեծ մարդասերի համար: 1915-ի արյունոտ օրերի բանաստեղծը մեկնում է Վան, ապա՝ Էջմիածին՝ անտեսելով ժանտախտն ու խոլերան, սովն ու ցուրտը, նա ձեռնամուխ է լինում հազարավոր հայ որբերի խնամքին: Դստեր՝ Նվարդի հետ նա կյանք է վերադարձնում անօթևան, որբ ու անտեր մանուկների: Թումանյանի համար անհուն երջանկություն էր, երբ տեսնում էր երեխաների մանկական խաղերը, լսում նրանց ծիծաղը: Հենց այս օերին է նա ամենայն հայոց կաթողիկոսին հիշեցնում իր ով լինելը՝ դառնալով իրեն բնութագրող լավագույն շրջասույթի հեղինակը՝ ամենայն հայոց բանաստեղծ, Այս օրերին են նրան անվանում հայոց որբերի հայրիկ, քանի որ կյանք վերադարձած որբերը նրան հայրիկ էին անվանում: Նրա անմիջական մասնակցությամբ և նախագահությամբ հիմնվում է ՀՕԿ-ը՝ շայաստանի օգնության կոմիտեն, 1921-ին մեկնում է Պոլիս՝ հենց այդ առաքելությամբ: Լինելով շայ գրողների կովկասյան ընկերության նախագահ՝ նա կոչով դիմում է համայն աշխարհի առաջադեմ մտավորականներին, հասարակական կազմակերպիչների, դեսպաններին, բոլոր նրանց, ովքեր կարող էին ինչ-որ կերպ օգնել իր ժողովրդին: Հենց այդ ողբերգական օրերի ծանր հոգեկան ապրումների ծնունդ են «Հոգեհանգիստ» և «Հայրենիքիս հետ» մարգարիտները:
Թումանյանի պալատում..., Նա մեծ էր հողով, արյունով..., Ես կարդում եմ նրան ու ասում....

4. 1937-ի նոյեմբերին Իսահակյանի մոտ է գալիս Չարենցի կինը՝ Իզաբելան, և նրան հանձնում ինչ-որ բան, որի մասին Վարպետը լռել է տարիներ շարունակ: Միայն ստալինյան բռնապետությունից հետո նա խնամքով պահված մի սպիտակ թաշկինակ է հանում՝ վրան՝ Չարենցի՝ մատիտով գրված հետևյալ «ստիխը» և երկտողը. «Ավո ջան, ներքևում քո երգն էին երգում, սիրտս լցվեց և գրեցի այս ստիխը: Ընդունիր որպես ձոն և ողջույն»: ...Իսկ այն երգում էին մահվան դատապարտված կալանավորները, որոնք բանտարկված Չարենցի ներքևի հարկում էին:

Որքան գնում- այնքան խոնարհ, այնքան անհուն և այնքան ջերմ

Ես խոնարհում եմ քո առջև և՛ սեր,՝ և սիրտ,՝ և քնար:

Արդեն ցնորք է անհնար, ունենալ երգ այդքան նայիվ,

Որ հմայե երեխային և ծերունու սրտում մնա:

Միրտո՞ կարող է վեհանալ, որ անսալով նրա սրտին,

Երգ ես տվել ժողովրդին, որ իր երգով անմահանա:

Այս կուզեի՝ ես ունենալ, գոնե մի երգ այնքան ջերմին,

Որ գրեի խուղիս որմին, և նա հավետ այնտեղ մնար:

Եվ սերունդներ գային այսպես և կարդային խուղիս որմին,

Մրտիս միակ երգը ջերմին, և երգը այդ ես քեզ տայի:

Ավետիք Իսահակյանը մեծ սիրերգակ է. նրա խորին համոզմամբ սիրո մեջ է «տիեզերքը հոգիանում, և հոգին՝ տիեզերանում»: Դեռևս «Ալազյազի մանիներ»-ում նա ներբողում է ազատ ու անկաշկանդ սիրո գաղափարը: Նա իր սիրած Չարոյին տանում է հայրենի բնության չքնաղ վայրերը՝ «Մանթաշի երազ հովիտը», «Ալազյազի լանջերը»: Չարոյի մանկական գեղեցիկ սիրուն փոխարինելու է գալիս երիտասարդական կրքով, կյանքով լեցուն սերը Շուշանիկ Մատակյանը, ում նվիրված բանաստեղծությունները թաթախված են կարոտով ու վշտով (Շուշան աղջիկ, քու գերին եմ), (Միրեցի, յարս տարան), (Էս ճամփեն մոլոր կերթա) և այլն: Իսահակյանի սերը մեզ սուզում է մի օվկիան, որտեղ հաղթում է այն լողորդը, ով կարողանում է սուզվել: Աշակերտը ինքը պետք է ներկայացնի Իսահակյանի սիրային բանաստեղծությունների վերլուծությունը: («Մի մրահոն աղջիկ տեսա», «Դարդս լացեք», «Գիշերն եկավ, զով-հովն ընկավ», «Ես երգիչ եմ», «Արազի ափին», «Ասպետի սերը», «Հավերժական սերը» բալլադները, «Ալազյազի մանիներ» պոեմը) և այլն:

Գնահատման չափանիշները /11-րդ դասարան/

1-ին հարց

1 ենթահարց՝ 0,5 մ.

2 ենթահարց՝ 2,5 մ.

3 ենթահարց՝ 2 մ.

2-րդ հարց

1 ենթահարց՝ 2 մ.

2 ենթահարց՝ 1 մ.

3 ենթահարց՝ 2 մ.

3-րդ հարց

1 ենթահարց՝ 2 մ.

2 ենթահարց՝ 1 մ.

3 ենթահարց՝ 2 մ.

4-րդ հարց

1 ենթահարց՝ 2 մ.

2 ենթահարց՝ 3 մ.